ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱԿՐԱՎԵՐՆԵՐ*

«Եւ վերջապէս, զօրացէ՛ք Տիրոջով եւ նրա զօրութեան կարողութեամբ. եւ Աստծու սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարանքներին. որովհետեւ մեր պատերազմը մարմնի եւ արեան հետ չէ, այլ՝ իշխանութիւնների հետ, պետութիւնների հետ, այս խաւար աշխարհի տիրակալների հետ եւ երկնքի տակ եղող չար ոգիների հետ»:

Եփես. Զ. 10-12

ԼՈՒՍՈ ՁԵՆՔԵՐԸ

ԻԱ. դարում առավել քան երբեւէ հարկ է լինում ուշադրություն դարձնել զանազան մշակութային «ներխուժումներին», որոնք տարբեր դիմակներով ներկայանում ու գրավում են հիմնականում անցումային տարիքի, չձեւավորված պատանիներին: Այս առումով օգտակար կլինի մեր կյանքում Պողոս առաքյալի պատվիրանները իրականացնել, որպեսզի կարողանանք դիմագրավել մեր իրական թշնամուն (Եփես. Զ. 13-18):

«Ուստի առէ՛ք Աստծու սպառազինութիւնը, որպէսզի կարողանաք չար օրում դէմ կանգնել չարին. եւ երբ ամէն ինչ կատարէք, հաստատո՛ւն կացէք՝ տեղում պինդ կանգնած»:

Զանազան քամիներ կարող են փչել, զանազան փորձությունների կարող ենք ենթարկվել, բայց դրանից հետո հաստատուն մնալու համար պիտի զինվել Աստծո սպառազինությամբ, այն զենքերով, որ ի զորու են ապահովել մեր հաստատակամությունը, եւ, ի վերջո, մեր հաղթանակը: Պողոս առաքյալը շատ հաճախ օրինակներ է բերում իր ժամանակաշրջանի ամենանշանակալի կայսրության՝ Հռոմի բանակային կամ իրավական կյանքից. ահա այս պարագայում եւս այս համարները ընթերցելիս պիտի աչքի առաջ ունենալ հռոմեացի զինվորին՝ իր մարտական կեցվածքով: Նրա կեցվածքը, սպառազինությունը բավարար է առաջ գնալու համար, քանի որ նահանջը հռոմեացու համար հավասարազոր է մահվան:

ա. «Ձեր մէջքերը գօտեպնդած ճշմարտութեամբ»:

Զինվորի բոլոր զենքերը իր վրա պահողը գոտին է. քրիստոնյայի համար այն ճշմարտությունն է՝ Քրիստոս անձամբ ինքը՝ որի վրա խարսխված է զինվորի, այսինքն՝ քրիստոնյայի ողջ սպառազինությունը՝ մարտի մտնելու համար:

բ. «Եւ հագած արդարութեան զրահը»:

*(սկիզբը՝ 2012, Բ. համարում)

Զինվորի համար ամենակարեւոր զենքը՝ զրահն է, որ պաշտպանում է նրան թե՛ մոտ գտնվող թշնամու հարվածներից, թե՛ հեռվից եկող հարվածներից: Քրիստոնյայի համար այդ զենքը՝ Արդարությունն է, այսինքն դարձյալ մեր Տեր Հիսուս Քրիստոս, քանի որ «Տէրն է մեր արդարութիւնը» (Երեմիա ԼԳ. 16): Մեր բարի գործերը, մեր հավատարմությունը մեզ անխոցելի են դարձնում թշնամու նետերի համար:

գ. «Ձեր ոտքերը ամրացրէ՛ք խաղաղութեան Աւետարանի պատրաստութեամբ»:

Զինվորի ոտքերի կոշիկները ապահովում են նրա արագաշարժությունը՝ քայլելու ու պայքարելու համար: Եթե զինվորը կոշիկ չունի մյուս զենքերը նրան օգուտ չեն կարող տալ. նա դատապարտված է: Հռոմեական շրջանում անկոշիկ էին միայն ստրուկները. նրանց կոշիկ չէին հագցնում, որպեսզի չկարողանան հեռու փախչել. քաղաքում անկոշիկ շրջողին, որպես ստրուկի, զինվորները հանձնում էին իշխանություններին: Քրիստոնյայի համար կոշիկները ավետարանի խաղաղությունն է, որ պիտի տաներէ քարոզել աշխարհին: Նրա ոտքերը ամրացված են ավետարանական իշխանությամբ՝ նա այլեւս ստրուկ չէ, մեղքի գերի չէ: Նա գնում է պատերազմի՝ զինված ավետարանական խաղաղությամբ: «Ինչ գեղեցիկ են ոտքերը նրա, ով խաղաղութեան լուրն է աւետում, ով բարութեան աւետիսն է բերում» (Եսայի ԾԲ. 7): Այպիսի կոշիկներով քրիստոնյան կարող է ջախջախել օձի գլուխը եւ հաղթանակած դուրս գալ մարտի դաշտից:

դ. «Եւ այս բոլորի վրայ, առէ՛ք հաւատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը»:

Վահանը զինվորի մարմինն է պաշտպանում անմիջական հարձակումներից: Քրիստոնյայի համար վահանը հավատն է, որ այն ամենը ինչի վրա նա հույս է դրել, իրականություն է եւ վստահություն՝ իր զենքերի հանդեպ: «Եթէ նոյնիսկ անցնեմ մահուան ստուերների միջով, չեմ վախենայ չարից, քանզի դու, Տէր, ինձ հետ ես» (Սաղմոս ԻԲ. 5): Հավատն է, որ պահելու է զինվորին, մարելու է ամեն փորձություն ու կրակ: Մարտի դաշտ մտնել առանց հավատի՝ արդեն պարտություն է:

ե. «Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտը»:

Թվարկած բոլոր հինգ զենքերի նպատակը զինվորի գլուխը պահելն է: Քրիստոնյայի համար փրկության սաղավարտը Քրիստոս Ինքն է, մեր «պահպանիչն ու յոյսը», կյանքը, նպատակը, ուժը, զորությունը՝ մնացած զենքերը իմաստությամբ գործածելու եւ հաղթանակի հասնելու համար:

զ. «Ու Հոգու սուսերը, որ է Աստծու խօսքը»:

Սուսերը հարձակողական բնույթի զենք է: Մինչ այդ Պողոս առաքյալը թվարկում էր պաշտպանական զենքեր. գոտին, կոշիկները, սաղավարտը, զրահը, վահանը պաշտպանվելու համար են: Քրիստոնյան պիտի Աստծո խոսքը լավ իմանա հոգեւոր պատերազմում հաղթելու համար, թշնամուն հարվածելու համար:

(շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ